ինքն չինքենէ, և հասեալ ի վերայ նորա բռնաւորք[1]) և տեարք քաղաքիս՝ մարեցին. և այնուհետև ոչինչ կարացին խօսել մեզ։ Եւ մերայնոցն ըսկսեալ խորհուրդ առնել վասն չինութեան առ Եղիազար վարդապետիւն, որ էր առաջնորդ և վերատեսուչ այսմ նահանգի և քաղաքիս, եկեալ թվին ՌՂԹ–ին։ Եւ էաք մեք ամենայն քաղաքովս անկեալ ի ներքոյ պարտուց ՂՌ զուռուշի, զոր արարեալ էր Դաւիթ եպիսկոպոսն Արևելցի, կապա զգեցեալ[2]) ի թագաւորէն ԵՁ անգամ և բազում դրամս խարճեալ պարտօք եւ զպարտսն բարդեալ ի վերայ եկեղեցեաց մեր. և այս ամենայն վասն փառաց և ոչ վասն Աստուծոյ։ Քանզի որչափ զսա աքսորեցին, նա՛ այնքան եկն և յայս յետին շունչն հասուց զտառապեալ ազգս Հայոց։ Եւ ի ժամանակիս յայսմ եկեալ Եղիազար վարդապետն՝ քարոզելով զբան Աւետարանին ի լսելիս հաւատացելոց և ժողովք առնել վասն վանիցն իւր, որ էր Բարձրահայեաց Սուրբ Աստուածածնի, առնել զպտուղ գաւազանին և դառնալ։ Եւ տեսեալ քաղաքացոցս զսա այր իմաստուն և հռետոր առ յամենայն բանս, ի մի վայր զումարեալ երկրորդ և երրորդ անգամ՝ հարկիւ զսա եղին առաջնորդ և վերատեսուչ, միթէ ճար ա[ռ]սցէ պարտուցն և եկեղեցեացն, որ և եղևն իսկ։ Եւ ի ժամանակին յայնմ Ղարա Ջաւուշն էր յէնկիչէր աղասի, և մտեալ ընդ նա՝ ծանօթացաւ ընդ նա և սիրելի ոչ սակաւ և տաւ նորա դրամ, և հանապազ կանխեալ կայր առ նմա. զբազում աւուրս յայսկոյս և յայնկոյս անկեալ առնէր հնար պարտուցն։ Եւ բազում դրամ շնոր[հ] ետուր և սուլթ ա[ռ]նել ետուր ընդ պար[տա]տէրն և զմնացեալն գրեաց ի վերայ քաղաքացոց, դրամ և ըստակ գրեալ ուրոյն ուրոյն յեկե–

1) բռնաւոր. 2) ըսգեցեալ.